# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՄԱՅՐ ԱԹՈՌ

Սեպտեմբերի 12-ին, Վերացման Ս. Խաչի տօնին բոլորուեց մի տարին, երբ Ս. Էջմիածնում գումարուած համազգային ժողովի ընտրած Տ. Մատթէոս Վեհ. Հայրապետը նոյն տաճարում ընդունելով կաթուղիկոսական օծումն, ձեռք առաւ Հայաստանեայց եկեղեցու վարչութեան ղեկը։ Մի տարին անշուշտ քիչ ժամանակ է ամբողջ երկրագնդի վերայ ցրուած մի ազգի, որպիսին մերն է, կարիքը իւր բազմադիմի երևոյթներով ուսումնասիրելու և ամենայն մասամբ գոհացում տալու այդ կարիքին։

Սակայն այդ կարճ ժամանակում իրերի իսկական ծանօթութեամբ ձեռնարկութիւնները, որոնց թուելը մեզ հեռու կը տանէր, գրաւական են, որ Տ. Մատթէոս Բ. Վեհափառ Կաթուղիկոսի օրով սկսուած են և շարունակւում են մեր եկեղեցու գործերի խաղաղ բարգաւաճումն, և վարչութիւնների ու վարիչների մէջ պարտքը գիտակցաբար կատարելու փոյթը։

Ահա այս գրաւականներով ուրախ, Մայր Աթոռի միաբանութիւնը հանդիսաւորութեամբ տօնեց Վեհափառ Հայրապետի օծման տարեդարձը։

Անցեալ 10-ին երեկոյեան ժամերգութիւնից առաջ ամբողջ միաբանութիւնը եկեղեցական թափօրով ընդառաջեց Վեհափառ Հայրապետին, որ իջնելով Վեհարանից, շուրջառ առաւ և մտաւ հովանու տակ, որի սիւները բռնել էին Սինոդի աստիճանաւորները։

Թափօրը շարականի երգեցողութեամբ և հանդիսական զանգահարութեամբ շարժուեց դէպի տաճար։ Իջման Ս. Սեղանի առաջ Վեհ. Հայրապետը ասաց պատշաճ սաղմոսն ու աղօթքները, և ապա սկսուեց երեկոյեան ժամեր-

գութիւնը, որից յետոյ շուրջառաւորուած ամբողջ միաբանութեան յառաջընթացութեամբ դուրս գալով տաճարից բարձրացաւ Վեհարան։ Հանդիսաւոր գնացքներին և ժամերգութեան ներկայ էին բաւական թուով ժողովուրդ, որոնց մէջ կային և Տաճկաստանից եկած ուխտաւորներ և օտարազգիներ։

Հետևեալ օրը, ամսի 12-ին հանդիսաւոր ս. պատարագից յետոյ, որ մատուցանում էր Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը, ի ներկայութեան Վեհափառ Հայրապետի, խուռն բազմութեան, կատարուեց հայրապետական մաղթանք, որից յետոյ միաբանութիւնը հենց տաճարում համբուրելով Վեհափառ Հայրապետի աջը, շնորհաւորեց օծման տարեդարձը և շուրջառազդեստ առաջնորդեց Նորին Սրբութեանը տաճարից դէպի Վեհարան։

Ժամը 1-ին միաբանութեան սեղանատանը սկսուեց ճաշկերոյթը, ներկայ էին ամբողջ միաբանութիւնը, Սինոդի ատենապետները, Վաղարշապատի ոստիկանական, դատարանական և զինուորական հաստատութիւնների պետերը, Վաղարշապատի հասարակութեան ներկայացուցիչները, Երևանից թեմական դպրոցի հոգաբարձութեան անդամները գլուխ ունենալով Փոխ-թեմականին, Տաճկաստանից և Կովկասի այլ և այլ տեղերից եկած ուխտաւորները։ Վեհափառ Հայրապետը պատուեց սեղանը իւր ներկայութեամբ։ Ճաշի ժամանակ Նորին Սրբութիւնը առաջարկեց Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսր Նիկոլայ Բ.-ի կենաց բաժակը. Տ. Մեսրոպ արքեպիսկոպոսը շնորհաւորելով Վեհափառ Հայրապետի օծման տարեդարձը, առաջարկեց Նորին Սրբութեան կենացը։ Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջարկեց Նորին Կայսերական Մեծութեան Կովկասեան փոխարքայի գրաֆ. Ի. Ի. Վորոնցով Դաշկովի կենացը։ Բոլոր կենացներն էլ ընդունուեցին բուռն ոգևորութեամբ և կեցցէներով։ Այս կենացներից յետոյ Վեհափառ Հայրապետը մեկնեց վեհարան և սեղանը աւելի ընտանեկան բնոյթ ստացաւ, խօսուեցին մի քանի ճառեր պատշաճ հաստատութիւնների համար բարեմաղթութիւններով։

Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ կատարուեց Խաչվերացի թափօր Մայր տաճարի զանգակատան առաջ։ Հանդիսադիրն էր օրուայ պատարագիչ Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը։

Երեկոյեան ճրագալոյց էր. խուռն բազմութիւնը մինչև ժամը 10-ը զբօսնում էր և զուարճանում գոյնզգոյն լապտերների ներդաշնակութեամբ ձևակերպուած խորհրդանշանները դիտելով, և գիւղացի պատանեակների երգեցողութիւնը լսելով ու պարերին մասիկ տալով։

---

Սեպտեմբերի 19 Վեհափառ Հայրապետը ընթերակայութեամբ Տ. Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի և Մեսրոպ եպիսկոպոսի և խարտավիլակութեամբ Աշոտ եպիսկոպոսի կատարեց եպիսկոպոսական ձեռնադրութիւն։ Ձեռնադրուողներն էին՝

1. Տ. Դանիէլ ծ. վրդ. Յակոբեան Կ. պոլսեցի, ձեռնադրուած 1889 թ. միաբան Ս. Յակոբեանց վանուց Երուսաղէմի, ուսեալ ի ժառանգաւորաց վարժարանի նոյն վանաց, տարիք 45։ Այժմ Տեղապահ պատրիարքութեան Ս. Երուսաղէմի։

2. Տ. Ստեփան ծ. վրդ. Աղազատեան վանեցի, ձեռն. 1876 թ. միաբան Կտուց անապատի, ուսեալ ի ժառանգաւորաց վարժարանի Վարագայ վանուց, տարիք՝ 58։ Այժմ վանահայր Կտուց անապատի Վանայ։

3. Եփրեմ ծ. վարդապետ Սուքիասեան ձեռնադրուած 1887 թուին Մայր Աթոռիս միաբան, 56 տարեկան. ուսեալ է Մայր Աթոռի ժառանգաւորաց դպրոցում։ Այժմ նախանգամ Թիֆլիզի Հայոց կոնսիստորիայի և կառավարիչ տեղւոյն էջմիածնապատկան կալուածների։

4. Տ. Մկրտիչ ծ. վրդ. Աղաւնունի պարտիզակցի, ձեռն. 1890 թ միաբան վանացն Արմաշու, ուսեալ ի Ներսիսեան վարժարանին Պարտիզակի (Նիկոմիդիա), տարիք 48։ Այժմ առաջնորդ Հայոց Եգիպտոսի։

5. Տ. Կարապետ ծ. վրդ. Մազլումեան պարտիզակցի, ձեռն. 1894 թ. ուսեալ ի Ներսիսեան վարժարանին Պար-

տիզակի (Նիկոմիդիա). տարիք՝ 41։ Այժմ առաջնորդ Պանորմա–Պալքէսիր միացեալ վիճակին։

6. Տ. Բաբգէն ծ. վրդ. Կիւլէսէրեան այնթապցի ձեռն. 1895 թ. միաբան Դպրեվանուց Արմաշու. ուսեալ ի ժառանգաւորաց վարժարանի նոյն վանաց. տարիք 42։ Այժմ առաջնորդ Հայոց Գաղատիոյ։

7. Տ. Զաւէն ծ. վրդ. Տ. Եղիայեան բաղտատցի, ձեռն. 1895 թ. միաբան Դպրեվանուց Արմաշու. ուսեալ ի ժառանգաւորաց վարժարանի նոյն վանաց. տարիք 42։ Այժմ առաջնորդ Հայոց Տիգրանակերտի։

8. Տ. Սմբատ ծ. վրդ. Սատէթեան ադաբազարցի, ձեռն. 1895 թ. միաբան Դպրեվանաց Արմաշու. ուսեալ ի ժառանգաւորաց վարժարանի նոյն վանաց. տարիք 40։ Այժմ առաջնորդ Հայոց Կարնոյ։

9. Տ. Թորգոմ ծ. վրդ. Գուշակեան պարտիզակցի, ձեռն. 1896 թ. միաբան Դպրեվանաց Արմաշու. ուսեալ ի ժառանգաւորաց վարժարանի նոյն վանաց. տարիք 37։ Այժմ առաջնորդ Հայոց Սեբաստիոյ։

10. Խորէն ծ. վարդապետ Մուրադբէգեան 38 տարեկան, ձեռնադրած 1901 թուին Մայր Աթոռս միաբան. ուսել է Թիֆլիզի Ներսիսեան հոգևոր դպրոցում. այժմ փոխ – թեմական Երևանայ։

Շնորհաւորելով նորապսակ եպիսկոպոսներին իրանց եկեղեցական բարձր աստիճանը կաղօթենք, որ լինեն մշակ առանց ամօթոյ ի տան Աստուծոյ։

—Վեհ. Հայրապետի հրամանով Տ. Մեսրոպ եպիսկոպոսը սեպտեմբերի 18-ին ծայրագունութեան աստիճան տուեց Եփրեմ և Մուրադբէգեան Խորէն վարդապետներին։

## ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ.

(«Բիւզանդիոն»)

**Ազգային վարչութիւն**

—Երկաթուղիների ընկերութիւնը սկսած լինելով գոյդ գիծ չինել, պատրիարքարանը որոշել է Հանրային շինու-